5680

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 138 - 25

Նախաձեռնող՝ ***«Շին-Կոմֆորտ» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ, Գավառ Ազատության 35/33

Գործունեությունը՝ ***Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայրի կրթահամալիրի կառուցում***
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 138 - 25

«19» Հոկտեմբեր 2025թ.

Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Շին-Կոմֆորտ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Հայկավան բնակավայր

Ներածական մաս. «Շին-Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայրում՝ /200 աշակերտի համար միջնակարգ դպրոց և 80 երեխայի համար նախատեսված մանկապարտեզ/ կրթահամալիրի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Մեծամորի համայնքապետարանի կողմից տրամադրված 2025թ. ապրիլի 29-ի ՈՆԹ-2914-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.0859 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ կառուցապատման ենթական հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1.0859 հա:

Ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա հյուսիս արևմտյան մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 853.2-855.6 մետրերի սահմաններում: Համաձայն տեխնիկական առաջադրանքի նախագծվող դպրոցը կառուցվելու է բնակավայրի դպրոցի հարակից տարածքում: Սոց շենքի կառուցումից հետո

հինը քանդվելու է, իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ: Առկա է նաև կիսաքանդ շինություն՝ 756 մ² մակերեսով, որը քանդվելու է սկզբնական աշխատանքների ընթացքում: Տարածքում առկա են մի քանի պտղատու ծառեր, որոնք պահպանվելու են շինարարության ընթացքում: Նոր կառուցվող դպրոցը նախատեսվում է տեղադրել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, ինչը կապահովի լսարանների գերակշիռ մասին հարավային կողմնորոշում: Նախատեսվում է բացօթյա մարզադաշտ, վազքուղի, իսկ ընդհանուր տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Նախատեսվող գործունեության տարածքը գործող դպրոցի տարածքն է, կից գտնվում է ներհամայնքային ճանապարհը, բնակելի տներ՝ 55-ից 100 մ հեռավորության վրա:

Նոր կառուցվող դպրոցի շենքն իրենից ներկայացնում է երեք՝ իրար կցված ծավալներից, երկհարկանի հիմնական դպրոցի մասնաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից և մանկապարտեզից: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճների մուտքերի մոտ նախատեսված են թեքահաթակներ: Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 հոգու համար, մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճ:

Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Երկրորդ հարկում դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց:

Նկուղային հարկը 21.6x20.4 մ չափեր է ունենալու, որտեղ նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, ջրի ռեզերվուար և պոմպարան: Բոլոր հարկերն իրար հետ կապված են և ունեն հարկերը կապող միջհարկային ամբարձիչ՝ հաշմանդամների համար:

Կրթահամալիրի գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ դպրոցական բացօդյա միջոցառումների համար: Մանկապարտեզը նախագծված է 1 հարկից՝ 2 խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղակայված են նաև հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, երկրորդ հարկում նաև հանդիսությունների սրահ, վարիչի և բժշկի սենյակ:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 1.0859 հա,
- կառուցապատման մակերեսը՝ 3955.90 քմ,
- դպրոցի մակերեսը 0.000 նիշում՝ 1995 քմ,
- կանաչապատման գոտու մակերեսը՝ 2957.60 քմ,
- բարեկարգման մակերեսը՝ 3195.2 քմ:

Նախագծով նախատեսվում է տարածքի բարեկարգում, կանաչապատում, խաղադաշտի և սպորտ հրապարակի կառուցում, շվաքարանի կառուցում, ինչպես նաև առկա է միջոցառումների համար նախատեսված տարածք:

Խաղադաշտի հարակից տարածքում նախատեսված է սպորտ հրապարակ, որի հարդարումն իրականացվելու է ռետինե հատակով:

Դպրոցի տարածքում պահպանված են հակահրդեհային միջոցառումների համար անհրաժեշտ պայմանները, ապահովված են հրշեջ մեքենաների մոտեցման համար անհրաժեշտ ճանապարհները:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում են բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ:

Հայկավանի կրթահամալիրի հարավային տարածքի գրունտային մակերեսին նախատեսվում է տեղադրել՝ 175 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային

համակարգ՝ էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով:

Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 318 հատ միաբյուրեղային՝ 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: ՖՎՀ-ն միացվելու է դպրոցի գոյություն ունեցող հողանցման ցանցին:

Կրթահամալիրի կառուցման համար իրականացվել են ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության համակարգերի ինժենարական լուծումները, որոնք իրականացվելու են ՀՀ շինարարական նորմերի համաձայն:

Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է ջեռուցման միջոցով՝ էլեկտրական յուղային ռադիատորներով, ինչպես նաև ջրային երկխողովականի ջրի մեխանիկական շրջանառությամբ՝ ալյումինե ռադիատորներով, բացառությամբ սպորտսրահի՝ որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ: Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

Դպրոցի համար նախատեսվում է նոր կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրում: Կենցաղային կոյուղու ցանցը լինելու է համակցված: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռացվելու է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին է միանալու կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ: Մաքրման կայանի արտադրողականությունը կազմում է 9.0մ³/օր, չափերը՝ 3.30x4.0 մ: «Topas 50» մաքրման կայանն իրենից ներկայացնում է միաձույլ ինքնակառավարվող սարք՝ պատրաստված ամուր պլաստիկից: Նշված մաքրման կայանի հզորությունը բավարար է նախատեսվող դպրոցի համար: Ջուրը ստորգետնյա խողովակներով կմիանա համայնքային ոռոգման առվին:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, դպրոցում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Շինարարության ընթացքում իրականացվելու են հողային և կիսակառույց շինությունների քանդման աշխատանքներ, այնուհետև գլխավոր մասնաշենքի կառուցում, որից հետո տարածքում իրականացվելու է բարեկարգում:

Ընդհանուր առմամբ քանդման աշխատանքները ներառելու են ուսումնական մասնաշենքերի քանդում:

Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և մեխանիզմներով՝ մի քանի փուլերով: Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ, որը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները հանձնվելու են բնակչության անապահով խավերին, իսկ մնացածը տեսակավորվելու և հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու է աղբավայր:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 640 օր, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար խմելու և կենցաղային ջրօգտագործումը հաշվարկվել է՝ ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (45 մարդ), ինչը կազմում է 771.2մ^3/շին. ժամ: 750մ^2 ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի՝ 281.25 մ^3/շին.ժամ կամ 1.219 մ^3/օր: Ընդհանուր ջրօգտագործումն ամբողջ ժամանակահատվածի համար կազմելու է 1052.45 մ^3/շին. ժամ:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես շինարարության տարածքի սահմաններում:

Կրթահամալիրի կառուցումը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 7360 մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից հետլիցքը կազմելու է 4360 մ^3: Ավելացած հողային հանույթը տեղափոխվելու է համայանքապետարանի կողմից հատկացված վայր:

Գործունեության ընթացքում առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայութուն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ: 2957.60 քմ մակերեսով տարածքում տնկվելու են նոր ծառեր՝ հացենի՝ 16, տուա՝ 30, թխկի՝ 12, լորենի՝ 11 հատ, տարածքում առկա ծառերը պահպանվելու են:

Տարածքում առկա բուսահողը կազմում է 550 մ^3: Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվելու է լայնակույտերով: Հանված հողի բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին ժամկետով, ողողումը և հողմահարումը կանխելու համար լայնակույտերի մակերևույթն ու թեքություններն ամրացվելու են խոտացանքով կամ այլ եղանակներով: Լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարվելու է հիդրոեղանակներով:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի տարածարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Ինչը ներառում է՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,

- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,

- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավվում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,

- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,

- տնկված ծառերի և խոտածածկի խնամք,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել մոտ 500 ՀՀ հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայրի կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է՝ գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Արմավիրի մարզպետարանը, Մեծամոր համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավվում, դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշիվ բարեկարգ և ժամանակակից բացօթյա մարզահրապարակների, բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքային ու ուսումնական գործընթացները կազմակերպել և անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը: Ինչպես նաև պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
- Քանի որ կառուցապատան աշխատանքներն իրականացվելու են գործող դպրոցի տարածքում, խստագույնս հետևել անվտանգության կանոններին և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ դպրոցականների մուտքը շինհրապարակ բացառելու նպատակով:
- Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մեծամորի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Շին-Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյան